

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لویس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446



Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Մայիսյան տոներ.....1
- 2- Իրանահայ Համայնք.....2
- 3- Հայաստան.....3
- 4- Արցախ.....6
- 5- Արեւմտյան Հայաստան.....7
- 6- Միջազգային.....15
- 7- Խոհեր.....20
- 8- Գծանկարչություն.....21
- 9- Հայերեն-պարսկերեն առաձանի.....21

Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր.....1-3



Շապիկի առաջին էջում՝ Մայիսյան

Վերջին էջում՝ Լույս է տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 187, Մայիս 2014 թ.

No. 187, May 2014

ماهنامه لویس - شماره ۱۸۷ خرداد ماه ۱۳۹۳

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ
Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են
չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին
պարտադիր է:



**«Ես ուզում եմ գլուխ խոնարհել
բոլոր նրանց առջև, ովքեր
չվախեցան Շուշի կոչվող
բարձրությունից, իրականացրին
անիրականանալիս». Կոմանդորս**

09 Մայիսի 2014

*Արցախի հերոս, ՀՀ մարտական խաչ 1-ին
աստիճանի շքանշանի ասպետ, գեներալ-մայոր
Արկաղի Տեր-Թադևոսյանի՝ Կոմանդորսի խոսքը՝
Շուշիի ազատագրման օրվա կապակցությամբ.*

«Շուշին բոլորիս հաղթանակն է
Շուշին Արցախի սիրտն է և այդ սրտին տիրանալու
համար մենք ազգովի ենք պայքարել: Եթե չլինեին
մեր թիկունքում սպասող մեր ընտանիքները,
ազգակիցներն ու հարազատները, դժվար թե մենք
որևէ էական հաղթանակ ունենայինք: 22 տարվա
հեռվից ես ուզում եմ գլուխ խոնարհել բոլոր նրանց
առջև, ովքեր հավատացին մեր հաղթանակին և
պայքարեցին, չվախեցան Շուշի կոչվող
բարձրությունից, իրականացրին անիրական-
անալին...

Նա, ով կտիրի Շուշիին, կտիրի նաև ողջ
Արցախին...և արդեն 22 տարի մենք պատվով
տանում ենք մեր հաղթանակը՝ չնայած
աղբիքաշանական ագրեսիային:

Շուշին հիմա շեն քաղաք է, ճիշտ է, շատ
փողոցներ դեռ քանդված են, կան ումբակոծության
հետքեր, կիսաքանդ շենքեր, բայց այստեղ նոր
սերունդ է մեծանում՝ հավատով և վստահ, որ
Արցախը երբեք չի լքի»:

Հայաստանի առաջին հանրապետությունը (1918թ. - 1920թ.)

Էդ. Քաղաքատյան

Այն օրերին, երբ հայ ժողովուրդը թուրքական զավթիչների դեմ կյանքի ու մահվան կռիվներ էր մղում 1918թ. մայիսյան հերոսամարտերում, սուր հակասություններ էին առաջացել երկրամասի երեք հիմնական ազգություններից կազմված Անդրկովկասյան Դաշնային Հանրապետության իշխանության մարմիններում: Այդ իսկ պատճառով Անդրկովկասյան Դաշնության փլուզումը դարձավ անխուսափելի:

1918 թ. մայիսի 26-ին լուծարվեց Անդրկովկասյան սեյմը (պառլամենտը), եւ դրանով իսկ կազմալուծվեց Անդրկովկասյան Հանրապետությունը: Այդ նույն օրը Վրաստանը հռչակեց իր անկախությունը, հաջորդ օրը՝ Ադրբեջանը, իսկ մայիսի 28-ին Թիֆլիսում գործող Հայոց (կենտրոնական) Ազգային խորհուրդը որոշում կայացրեց հռչակել Հայաստանի անկախությունը: Ընդունված հայտարարագրում մասնա-փորձապես ասվում էր. «Անդրկովկասի քաղաքական ամբողջ-ջութան լուծարումով եւ Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր կացության հանդեպ՝ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական զավառների գերագույն եւ միակ իշխանություն»:

Ըստ հայ պատմաբան Զարեանդի՝ «Հայաստանի Հանրապետության դեմ առարկություն կա, որ այն «անոնց» էր՝ Իսկ այդ «անոնց» ունի երոկւ իմաստ՝ նախ այն, որ արեւելահայերն ենկերտել Հայաստանի Հանրապետությունը, ապա երկրորդն այն է, որ այն ՀՅԴ-ի ձեռնարկածն է... Սակայն Հայաստանի Հանրապետությունը հիմնվեց բովանդակ հայ ժողովրդի ճիգերով, նրա ստեղծման մեջ դեր կատարեց ո՛չ միայն արեւելահայությունը, այլեւ արեւմտահայ գաղթականությունը եւ աշխարհի չորս կողմերից երկիր փութացող կամավոր-րությունը: Հայոց ազատությունը կերտեցին Դաշնակցական պետերի՝ Արամի եւ Դրոյի հետ միասին ոչ-կուսակցական գորավարներ՝ Նազարբեկյանը, Միլիկյանը եւ Փիրումյանը: Ինչու հայ ժողովրդի միահամուռ ջանքերով ստեղծված հանրապետության հիմնադրի պատիվը տալ միայն արեւելահայության եւ միայն Դաշնակցությանը»:

Այսպիսով, եղեռն ապրած հայ ժողովուրդը, թշնամու մահաբեր սպառնալիքի պայմաններում, ուժ գտավ իր մեջ եւ վերականգնեց հայոց անկախ պետականությունը: Հայաստանի անկախության հռչակումը պատմական անհրաժեշտություն էր եւ ստեղծված պայմաններում միակ նախընտրելի ուղին: Հայաստանի անկախության համար հայ ժողովուրդը պարտական էր ազատագրական իր տեւական պայքարին, իսկ կոնկրետ պարագայում՝ Մարդարապատի, Բաշ Ապարանի, Դարաքիլիսայի հաղթական հերոսամարտերին: Ի նշանա-փորձում այդ իրադարձության՝ Մայիսի 28-ը համարվում է համայն հայության նվիրական տոներից մեկը՝ Առաջին հանրապետության անկախության օրը: Հայաստանի անկախության հռչակումը շրջադարձային եղավ հայ ժողովրդի քաղաքական եւ հոգեւոր-մշակութային կյանքում:

Մայիսի 9-ը հաղթանակի օրն է. Հայ ժողովուրդը տվել է 107 խորհրդային միության հերոս

Մայիս 09, 2011

Խորհրդային Միության, Խորհրդային Հայաստանի քաղաքացիների ուրախությունը 66 տարի առաջ այս օրը՝ մայիսի 9-ին, անսահման էր: Այդ օրը Լեւիտանի անկրկնելի ձայնը հայտնեց, որ պատերազմը հաղթական ավարտ է ունեցել: Մեծ հաղթանակի համար իրենց կյանքն են տվել շուրջ 20 միլիոն խորհրդային քաղաքացիներ:

Ֆաշիստական Գերմանիայի եւ նրա դաշակիցների զորքերը հանկարծակի ԽՍՀՄ-ի վրա հարձակվեցին 1941 թվականի հունիսի 22-ին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ռազմաճակատ են մեկնել շուրջ 600 հազար հայեր, որոնցից կեսից ավելին տուն չի վերադարձել: Հայորդիներից ձեւավորվել է 6 դիվիզիա: Առաջինը 76-րդ լեռնա-հրաձգային դիվիզիան էր, որն աչքի ընկավ Ստալինգրադի մոտ տեղի ունեցած ռազմական գործողություններում: Երկրորդը՝ 89-րդ դիվիզիան էր, որը ձեւավորվեց 1941 թվականի դեկտեմբերին, Երեւանում, եւ Կովկասի նախալեռնային շրջանից մարտնչելով հասավ մինչեւ Բեռլին: Երրորդը՝ 390-րդ դիվիզիան, Անդրկովկասյան զինվորական ստորաբաժանման կազմում մասնակցել է Կերչի թերակղզում մղվող գործողություններում: Չորրորդ 409-րդ դիվիզիան ստեղծվել է 41 թվականի աշնանը, եւ ռազմական գործողությունների մեջ է մտել Տերեկայի ափերին եւ հաղթական քայլերով հասել է մինչեւ Դուբնայի ափերը: Հինգերորդ դիվիզիան 408-րդն էր: Այն մասնակցել է Կովկասի Սեւծովյան ափի մոտ տեղի ունեցած մարտական գործողություններին: Վեցերորդը՝ 261-րդ դիվիզիան, պաշտպանել է ԽՍՀՄ-ի պետական սահմանը՝ հայկական տարածք թուրքական ներխուժման վտանգը կանխելու նպատակով:

Հայ մարտիկները աչքի են ընկել հատկապես Բրեստի ամրոցի եւ Սեվաստոպոլի Մոսկվայի եւ Լենինգրադի մատույցներում տեղի ունեցած գործողություններում: Հայերը մարտնչել են Ստալինգրադում, Կուրսկում, հերոսաբար պաշտպանել են Հյուսիսային Կովկասը:

Երկրորդ աշխարհամարտի ծանր փորձություններում իրենց հաղթական մասնակցության համար 65 հայորդիների շնորհիվ է զինվորական բարձր կոչումներ՝ Խորհրդային բանակի գեներալ եւ Ռազմա-ծովային նավատորմի ծովակալ: Նրանց շարքում են Խորհրդային բանակի մարշալներն՝ ի դեմս Հովհաննես Բաղրամյանի, ծովակալ Հովհաննես Իսակովի, ավիացիայի մարշալ Մերգել Խուդյակովի: Հայաստանը երկրին տվել է 107 Խորհրդային միության հերոս:

Հայ ժողովրդի մարտական ոգու եւ հերոսության խորհրդանիշը դարձավ հայկական ժողովրդական պարը, որը հայ մարտիկները պարեցին ավերակ դարձած Ռեյխսադաի պատերի տակ:

Հիշեցնենք, որ այսօր բացի Երկրորդ աշխարհամարտի հաղթանակի 66-ամյակից, Հայաստանում նշվում է նաեւ Ծուշիի հաղթանակի 19-ամյակը:

Իրանահայ Համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՓՅՈՒՌԷԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՄԱՍՈՒԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

0010, Երեւան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ
Հեռ.: (+374.10) 58-56-01, ներքին 108, հեռապատճեն (ֆաքս)
(+37410) 58-91-57

**«Նոր Զուղայի օրեր» ծրագիրն
ավարտվեց մշակութային
միջոցառումներով**



Մայիսի 24-ին ՀՀ սփյուռքի նախարարության, Սպահանի հայոց թեմի թեմական խորհրդի և Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի համատեղ նախաձեռնությամբ Երևանում անցկացվող «Նոր Զուղայի օրեր» ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ մշակութային միջոցառումների շարք, որով եզրափակվեց ծրագիրը:

Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի Սուրբ Հովսեփ Արեմաթացի եկեղեցու հիմնադրման 350 ամյակին նվիրված հանդիսության մասնակիցներին ողջունեց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Նա մասնավորապես նշեց. «Հայոց Եկեղեցու և հայ ժողովրդի պատմություններն այնպես սերտորեն են միահյուսված, որ առանձին-առանձին հնարավոր չէ դրանք ներկայացնել: 400-ամյա պատմություն ունեցող ժողովուրդը Նոր Զուղայում կառուցել է Ամենափրկիչ եկեղեցին, եկեղեցին պահել է համայնքը: Բառերն անգոր են հաղորդելու, նկարագրելու մշակութային այն առեղծվածը, որ պահել, պահպանել ու սերնդեսերունդ փոխանցել է մեր լեզուն, պատմությունը, մեր գոյատևման խորհուրդը: Այսօր մեր հարևան Իրանի Իսլամական Հանրապետությունը ստեղծել է բոլոր պայմանները, որ պահպանվի և անխաթար մնա մեր մշակույթը: Ես խորին շնորհակալություն եմ հայտնում Իրանի պետությանը, ՀՀ-ում նրա մեծարգո դեսպանին այն մթնոլորտի համար, որ

ստեղծել են Զուղայում, Իրանում, որպեսզի հայը իրեն հայ զգա»:



ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Մոհամմադ Ռեյխան, ողջունելով ներկաներին, հավելեց. «Այս երեք օրվա միջոցառումները ցույց են տալիս մեր ժողովուրդների մշակութային ընդհանրությունները: Նոր Զուղան կարևոր դեր է խաղում Իրանի հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում: Բոլոր զբոսաշրջիկներն անպայման այցելում են Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ եկեղեցի, որն իրավամբ համարվում է Իրանի հայ համայնքի հոգևոր, ազգային, մշակութային և հասարակական գործունեության գլխավոր կենտրոնը»:

Ելույթ ունեցան նաև Սպահանի Հայոց թեմի առաջնորդ Տեր Բաբկեն եպս. Չարյանը, ՀՅԴ անդամ, ծնունդով ջուղայեցի Հրանտ Մարգարյանը, Սպահանի Հայոց թեմի թեմական խորհրդի նախագահ Նոյել Մինասյանը:

Ցուցադրվեց Ռուբեն Գևորգյանցի Նոր Զուղայի հայ համայնքին և Սբ. Ամենափրկիչ եկեղեցու պատմությանը նվիրված «Նոր Զուղա. լինել» ֆիլմը:

Ելույթ ունեցավ Սպահանի «Կոմիտաս» երգչախումբը դիրիժոր Արմեն Ամիրխանյանի գլխավորությամբ: Հնչեցին Կոմիտասի, Ալեքսանդր Հարությունյանի, Ռոբերտ Պետրոսյանի, Աշոտ Ղազարյանի ստեղծագործությունները: Մեներգեցին Աննա Մայիլյանը և Գոռ Ամիրխանյանը:

Ի լրումն հանդիսության՝ Առնո Բաբաջանյան համերգասրահի ճեմասրահում բացվել էր «Նոր Զուղայի հայ համայնքն անցյալի և ներկայի խաչմերուկներում» խորագրով ցուցահանդես:

Ներկայացվել էին Նոր Զուղայի տարազներ, հարսանեկան շորեր, մաշիկներ, գոտիներ, գլխարկ: Առանձին հավաքածուներով ցուցադրված էին սեղանի հյուսկեն ու ասեղնագործ ծածկոցներ, թաշկինակներ, օձիքներ, եկեղեցական ոսկեյուս վեղարներ, գրքեր Նոր Զուղայի մասին, թերթեր և ամսագրեր, արխիվային այլ նյութեր: Վախանակները ներկայացնում էին հայտնի նորջուղայեցիների և Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու հոգևոր հայրերի կենսագրությունները, լուսանկարները:

Հայաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՓՅՈՒՌԷԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՈՒԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0010, Երեւան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ
Հեռ.: (+374.10) 58-56-01, ներքին 108, հեռապատճեն (ֆաքս)
(+37410) 58-91-57

Էլ. փոստ. press@mindiaspora.am

105-26.05.2014թ.

Մեկնարկեց Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերի ներկայացուցիչների հավաք- հանդիպումը

Մայիսի 26-ին Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտում մեկնարկեց ՀՀ սփյուռքի նախարարության և Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի կողմից կազմակերպված Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերի ղեկավարների և ներկայացուցիչների հավաք-հանդիպումը:

Հավաք-հանդիպման մասնակիցներն այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և ծաղկեպսակ դրեցին Հայոց Ցեղասպանության զոհերի հուշակոթողին:

Հավաք-հանդիպմանը բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար, պետական հանձնաժողովի անդամ, Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների համակարգող Վիգեն Սարգսյանը:

ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարը շնորհակալություն հայտնեց հավաք-հանդիպման մասնակիցներին, ովքեր աշխարհի տարբեր երկրներից հավաքվել են մասնակցելու և իրենց ուրույն ներդրումը բերելու Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված աշխատանքները կազմակերպելուն ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում:

Վիգեն Սարգսյանը կարևորեց այն հանգամանքը, որ այս հավաքն արդեն իսկ տեղի է ունենում թանգարան-ինստիտուտի նորակառույց վարչական շենքում:

ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարը վստահություն հայտնեց, որ Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների ընդգրկումները տպավորիչ են լինելու:

Վ.Սարգսյանը տեղեկացրեց, որ ս.թ. մարտին կայացած տարածաշրջանային հանձնաժողովների ներկայացուցիչների հանդիպումից հետո հաստատվել են Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված

խորհրդանիշը և կարգախոսը: Որպես խորհրդանիշ ընդունվել է անմոռուկ ծաղիկը, որը աշխարհի բոլոր լեզուներով թարգմանվում է՝ չմոռացվող: Կարգախոսն է՝ «Հիշում եմ և պահանջում»:

Վիգեն Սարգսյանը տարածաշրջանային հանձնաժողովներին կոչ արեց համադրել ջանքերը և իրականացվող բոլոր միջոցառումները արձանագրել, ներկայացնել և լուսաբանել հավուր պատշաճի:

Այնուհետև ելույթ ունեցավ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը՝ ներկայացնելով նախարարության կողմից Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում իրականացվող աշխատանքները:

ՀՀ սփյուռքի նախարարը նշեց, «100 տարի առաջ Օսմանյան Թուրքիայի նպատակն էր՝ թողնել մեկ հայ և այն էլ թանգարանում: Հայերն այսօր ունեն երկու պետություն և օտար ափերում հիմնադրված ու հայանպաստ գործունեություն իրականացնող հայահոծ հզոր համայնքներ»:

Ներկայացնելով Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման և հետևանքների վերացման ողջ ընթացքը և ձեռքբերումները՝ նախարարն ընդգծեց, որ նույնիսկ Թուրքիայում իրավիճակի հստակ փոփոխություն է նկատվում:

«Ուզում եմ առանձնահատուկ ընդգծել մեր երկու կաթոլիկոսների համայնքային պահանջատիրական կեցվածքը, որն իր անուրանալի դերակատարությունն է ունեցել Հարցի վերհանման գործում», - նշեց տիկին Հակոբյանը:

Նախարար Հ.Հակոբյանը նշեց, որ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից վերջին 3 տարիների ընթացքում Ցեղասպանության թեմայով կազմակերպվել է 18 համաժողով և գիտաժողով, որոնց մասնակցել է շուրջ 3000 գիտնական, իրավաբան, փորձագետ և այլ մասնագետներ Սփյուռքից: Անցնող 3 տարիների ընթացքում պատվիրվել է 17 հետազոտություն:

«Մեր մեծերը» ծրագրի շրջանակներում նախարարությունը կազմակերպել է Հայոց Ցեղասպանությանը գոհ գնացած հայ մտավորականներին, գրողներին նվիրված միջոցառումներ Հայաստանում, Սփյուռքի տարբեր համայնքներում, «Կոմիտաս Վարդապետ» փառատոնի շրջանակներում մի քանի օր շարունակ Սփյուռքից ժամանած երգչախմբերն ու երաժշտախմբերը ներկայացրել են Կոմիտասի երգերը, կազմակերպվել են Ցեղասպանության թեմայով շարադրությունների մրցույթներ, մրցանակաբաշխություններ, քայլեր են ձեռնարկվել Ցեղասպանության թեմայով բուհերում մագիստրոսական թեզերը պատրաստելու ուղղությամբ:

Ողջունելով հավաք-հանդիպման մասնակիցներին թանգարան-ինստիտուտի նորակառույց վարչական շենքում՝ Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը նշեց, որ շենքի ամբողջական գործարկումից հետո հնարավոր կլինի այցելուներին ներկայացնել 2,5 անգամ ավելի ցուցադրություն: Բացի այդ, թանգարան-ինստիտուտը

հանդես կգա նոր՝ գիտաճանաչողական, կրթադաստիարակչական առաքելությամբ:

Հայկ Դեմոյանը կոչ արեց մասսայականացնել սկսված շարժումը, թանգարանի գիտական ֆոնդերի և նոր ցուցադրության համալրման համար թանգարանին ստիտուտին նվիրատվության կարգով կամ պատճենահանման պայմանով տրամադրել Ցեղասպանությունից տուժած ընտանեկան լուսանկարներ և փաստաթղթեր, վերապրողների հուշագրություններ և բանավոր պատմությունների ձայնագրություններ, ընտանեկան մասունքներ:

Զեկուցումներով հանդես եկան տարածաշրջանային հանձնախմբերի ներկայացուցիչները՝ Ֆրանսիայի հանձնախմբի ազգային պատասխանատու Ալեքսի Գովյանը, Փարիզի Ֆրանսահայ կազմակերպությունների համակարգող խորհրդի համանախագահ Արա Թորանյանը, Ռումինիայի Հայոց միության նախագահ, սենատոր Վարուժան Ոսկանյանը, Երուսաղեմի Հայոց պատրիարքության միաբան Հայր Կորյուն վրդ. Բաղդասարյանը, Բրազիլիայի հանձնախմբի նախագահ Անդրե Կիսաջիքյանը, ՀՅԴ Հարավային Ամերիկայի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Խաչիկ Տեր-Ղուկասյանը, Լիբանանի Հայոց Ցեղասպանության 100-ամյակի Կենտրոնական մարմնի աստենապետուհի Մեղա Խղըշյանը և այլք: Նրանք ներկայացրին Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված՝ տարածաշրջաններում իրականացված միջոցառումները և առաջիկա անելիքները:

Գարեգին Բ-ն մի շարք հանդիպումներ է ունեցել Վատիկանում. Նա հանդիպել է Զոմբի Նախկին Պապի հետ



Մայիս 09, 2014

Վատիկան կատարած եղբայրական այցի շրջանակներում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն նաև մի շարք հանդիպումներ է ունեցել:

Մայր Աթոռի տեղեկատվական համակարգից հայտնում են, որ այցի ընթացքում նա մասնավոր առանձնագրույց է ունեցել հանգստի անցած Բենեդիկտոս ԺԶ Պապի հետ:

Գարեգին Բ-ն նաև հանդիպել է Վատիկանի Պետքարտուղար Կարդինալ Պիետրո Պարոլինի, Քրիստոնեական միության ջատագովման պապական խորհրդի նախագահ Կարդինալ Կուրտ Կոխի և Արևելյան Եկեղեցիների կոնգրեգացիայի նախագահ Կարդինալ Լեոնարդո Սանդրիի հետ:

Նորին Սրբությունը պատվիրակության ուղեկցությամբ այցելել է նաև Ս. Պետրոսի տաճար, ապա Կաթոլիկ Եկեղեցու կողմից օրեր առաջ սրբադասված Հովհաննես ԻԳ և Հովհաննես Պողոս Բ պապերի շիրիմներին: Աղոթք կատարվեց Հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետին նվիրված արձանի առջև:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Անաստաս Միկոյան. ինչ է արել Նա Հայաստանի համար եւ ինչու նրա արձանը պետք է դրվի Երեւանում



Մայիս 04, 2014 | 19:51

Խորհրդային տարիների հայտնի պետական գործիչ, հակասական կերպար հանդիսացող Անաստաս Միկոյանի արձանը Հայաստանի մայրաքաղաքում տեղադրելու Երեւանի ավագանու որոշումը բուռն հակազդեցություն է առաջացրել սոցիալական ցանցերում ու հասարակության մեջ:

Այս առնչությամբ Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը NEWS.am-ի հետ զրույցում, մասնավորապես, նշեց. «Լենինյան եւ ստալինյան շրջանի կարկառուն պետական գործիչ Անաստաս Միկոյանի արձանը չպետք է տեղադրվի Երեւանում, քանի որ նա՝ Հայաստանի համար ոչինչ չի արել, հակառակը՝ անմիջական մասնակցություն է ունեցել ստալինյան ռեպրեսիաներին»: Նրա խոսքով՝ այդ մասին իրենց արխիվում փաստաթղթեր կան: «Մահացածների ոսկորները պետք է հանգիստ թողնել, շատ բարդ խնդիր է: Միկոյանն իհարկե մասնակցել է բռնադատումներին, դեր է

խաղացել որոշակի, այս մարդկանց պետք է հանգիստ թողնել, ոչ արձաններ դնել, ոչ փողոցներ անվանել, թողնել այդ հարցը ապագա սերունդներին, իրենք մեզնից խելացի են: Միկոյանը մեծ քաղաքական գործիչ է, խորհրդային մասշտաբի, սակայն ի՞նչ է արել նա Հայաստանի համար, բացարձակապես ոչ մի բան», - ասում է ազգային արխիվի տնօրենը:

Նրա խոսքով՝ ընդհակառակը Անաստաս Միկոյանը նպաստել է, որ ավելի շատ հայերի գնդակահարեն: «Հեռագիր է գնացել Երեւանից Մոսկվա, որ Հայաստանում 500 մարդ ձերբակալելը քիչ է, պետք է դարձնել 1000 մարդ, իսկ Մոսկվան էլ դարձրել է 1500: Կամ դատական նիստեր կազմակերպել, ցույց տալ, որ ժողովրդի թշնամիները Հայաստանում վիստում են, վնասում են տնտեսությանը եւ այլն, եւ այլն: Էդպիսի շատ փաստաթղթեր կան իր ստորագրությամբ», - ավելացնում նա:

Մակայն սա միակ աղաղակող փաստը չէ՝ ընդդեմ պետական գործչի: Ազգագրագետ Հրանուշ Խառատյանը [NEWS.am](http://news.am)-ի հետ զրույցում ներկայացնում է ռուսական արխիվից փաստաթղթեր, որոնցում հստակ ասվում է, թե ինչ դիրքորոշում է ունեցել Միկոյանը Ղարաբաղի հարցում: «1920 թ. մարտի 22-ին տեղի է ունեցել Շուշիի հայերի ահռելի կոտորածը, որից հետո քաղաքում հայ չի մնացել, քաղաքն էլ հրդեհվել է: Այս համագումարի մասին է, որ Շուշիի հայկական կոտորածներից հետո բոլշևիկները, այդ թվում Միկոյանը, կենտրոնին տեղեկացնում են, իբրեւ հայերը «վճռակաւորեն արտահայտվել են Ադրբեջանի հետ լիակատար միասնականության օգտին»: Կարելի է վստահ լինել, որ Միկոյանը հստակ գիտեր, թե ինչպես է ձեռք բերվել Ղարաբաղի հայության 1919 թ. համագումարի որոշումը եւ թե իրականում ո՞րն էր այդ որոշումը: Միկոյանը Բաքվում է եղել այս հեռագրերը ուղարկելուց մեկուկես տարի առաջ, եւ Բաքվի հայության սարսափելի կոտորածը նրա աչքի առաջ է կատարվել, մասամբ՝ նաեւ բոլշևիկների, Բաքվի կոմունայի, ուրեմն նաեւ՝ իր մեղքով:

Մակայն Միկոյանը, չբավարարվելով այդքանով, իր պարտքն է համարել 1920 թ. հուլիսի 29-ին միայն իր ստորագրությամբ եւս մի հեռագիր ուղարկել Օրջոնիկիձեին. «Ղարաբաղի եւ Զանգեզուրի հարցով մենք զայրացած ենք Կենտրոնի քաղաքականությամբ: Դու նույնպես պնդիր Կենտրոնում մեր տեսակետը: Մենք դեմ չենք Հայաստանի հետ խաղաղությանը, բայց ոչ մի դեպքում Ղարաբաղի ու Զանգեզուրի գնով» (Телеграмма А.Микояна Г.Орджоникидзе. 29.06.1920 // РГАСПИ, ф.64, оп.1, д.17, л.134):

Հավատում էր արդյոք Միկոյանը իր ուղարկած հեռագրերի շրջանակներում Ղարաբաղի եւ Զանգեզուրի բնակչության անվտանգ ապագային 1918-20 թթ. Բաքվի, Նուխի-Արեշի, Ղարաբաղի հայերի սարսափելի կոտորածներից հետո եւ ինչպե՞ս էր պատկերացնում Հայաստանն առանց այդ տարածքների: Թե՞ դաշնակցության հանդեպ ատելությունն այնքան մեծ էր, որ նա գերադասում էր շրջանցել Հայաստանի ցանկացած միջամտություն Ղարաբաղի ու Զանգեզուրի ճակատագրերի որոշմանը: Պետք է ենթադրել, որ Ադրբեջանի բոլշևիկներն շտապում էին դեպքերն արագացնել, որովհետեւ ընթացքի մեջ էր Սեւրի պայմանագիրը (այն ստորագրվեց 1920 թ.

օգոստոսի 10-ին) եւ նրանք ուզում էին օր առաջ լուծած լինել Ղարաբաղի եւ Զանգեզուրի հարցը՝ փաստի առաջ կանգնեցնելով Սեւրի պայմանագրի վրա աշխատողներին: Իսկ Սեւրի պայմանագրով կոնկրետ Անդրկովկասի երկրների՝ Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի սահմանները պիտի որոշվեին այս պետությունների ուղղակի բանակցություններով, հակառակ դեպքում դաշնակից պետությունները խնդիրը պետք է լուծեին հատուկ ստեղծվող հանձնաժողովով: Հարց է ծագում՝ ինչու՞ Միկոյանն էլ շահախնդիր էր Ղարաբաղի ու Զանգեզուրի հարցը լուծել առանց Հայաստանի մասնակցության՝ հոգուտ Ադրբեջանի», - ասում է ազգագրագետը՝ պնդելով, որ այսպիսի փաստերից հետո անկարելի է նման գործչի արձանը տեղադրել Երեւանի կենտրոնում:

Հարց է առաջանում՝ արդյոք Երեւանի ավագանին այս մասին չգիտեր, կամ որ արժանիքների համար է որոշում կայացրել Անաստաս Միկոյանի արձանը տեղադրել մայրաքաղաքում:

Քաղաքապետարանի մամուլի ծառայությունից հրաժարվեցին մեկնաբանել Անաստաս Միկոյանի արձանը տեղադրելու մասին որոշումը՝ պատճառաբանելով, որ դա Երեւանի ավագանու որոշումն է, ոչ թե քաղաքապետարանի: Ի դեպ, ավագանու անդամ է նաեւ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, որը նույնպես կողմ է քվեարկել այս նախաձեռնությանը: Հատկանշականն այստեղ այն է, որ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հայրը, Հայաստանի նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանը խորհրդային տարիներին այլախոհ է եղել եւ պայքարել է խորհրդային կարգերի դեմ ու այսօր ստացվում է, որ որդին մեծարում է իր հորը բանտերը նետած իշխանության, բռնությունների խորհրդանիշ հանդիսացող խորհրդային գործչին՝ նրա արձանը Երեւանում տեղադրելով:

Երեւանի Ավագանու որոշման մեջ Անաստաս Միկոյանի կենսագրությունը ներկայացված է «շատ գեղեցիկ եւ սահուն»՝ առաջացնելով մի շարք հարցեր: Օրինակ՝ ինչպես կարող է Միկոյանը 1924թ.-ին ավարտել Գեւորգյան ճեմարանը, իսկ 1920-1926թթ. աշխատել Ռուսաստանում: Իսկ թե ինչ է արել Միկոյանը Հայաստանի համար, կենսագրության մեջ ոչինչ նշված չէ: Այսպիսի կենսագրության հիման վրա էլ Երեւանի ավագանու անդամները, բացառությամբ ՀՀԿ-ական Հայկ Դեմոյանի եւ «Բարեւ Երեւան» դաշինքի երեք անդամների, ապրիլի 30-ին որոշում է կայացրել արձանը տեղադրելու մասին:

[NEWS.am](http://news.am)-ի հարցին՝ ինչու եք կողմ քվեարկել արձանը տեղադրելուն՝ Երեւանի ավագանու Հանրապետական խմբակցության անդամ Սմբատ Լպուտյանը հրաժարվեց պատասխանել, իսկ Հովհաննես Թոքմաջյանն էլ ասաց. «Կողմ եմ քվեարկել՝ հաշվի առնելով երրորդ համաշխարհային պատերազմը կանխելու առիթով նրա մատուցած ծառայությունները»: Մեր հարցին՝ միայն ա՞յս արժանիքի համար, Թոքմաջյանը բարկացավ. «Ասացի՞ ինչի համար եմ կողմ քվեարկել, իսկ մյուսների բերված փաստարկները ընդամենը քննարկումներ են, որոնք անհրաժեշտ է հետազոտել, չեմ բացառում, որ նման բան եղել է, սակայն պետք է հաշվի առնել տվյալ ժամանակաշրջանը»: Անկախ ամեն ինչից

Թոքմաջյանը համոզված է, որ արձանը տեղադրվելու է, քանի որ ավագանին այդպես է որոշել: Թե երկրորդ համաշխարհայինի տարիներին ինչ է արել Միկոյանը Հայաստանի համար, ավագանու անդամն այդպես էլ չպատասխանեց:

Ի դեպ կենսագրականում այդ մասին ոչինչ չկա, իսկ հասարակությունը շարունակում է սոցկայքերում գնահատականներ տալ ավագանու այս որոշմանը՝ անուղղակի հարց ուղղելով Երեւանի գլխավոր ճարտարապետ Տիգրան Բարսեղյանին, որն այս ամենի հեղինակն է: Թե ինչու է քաղաքի գլխավոր ճարտարապետը որոշել Բսահակյան-Կորյուն փողոցների միջանկյալ պուրակում տեղադրել Միկոյանի արձանը, մեզ պարզել չհաջողվեց, հատկապես երբ մենք ունենք ազգային շատ հերոսներ, որոնց արձաններն այսօր Հայաստանում չկան:

Աիդա Հովհաննիսյան

Թուրքիա այցելած հայաստանցիների թիվը մարտին կտրուկ աճել է



Մայիս 21, 2014

Թուրքիա մեկնած հայաստանցիների թիվը 2014-ի մարտին կազմել է 4 715 հոգի:

Ինչպես NEWS.am-ը տեղեկանում է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությունից, 2014-ի հունվար-մարտ ամիսներին Թուրքիա է այցելել 11 150 քաղաքացի, որը 3,9 տոկոսով ավել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Միայն 2014-ի մարտին Թուրքիա մեկնած հայաստանցիների թիվը կազմել է 4 715 հոգի, որը 15 տոկոսով ավել է նախորդ տարվա մարտ ամսվա համեմատ: 2013-ի մարտին Թուրքիա էր այցելել 4 126 հայաստանցի:

Այս տարվա հունվար-մարտին Թուրքիա կատարած այցերով ռեկորդ են սահմանել Իրանի քաղաքացիները՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 77 տոկոս աճով: 2014-ի հունվար-մարտ ամիսներին Թուրքիա է այցելել 231 523 իրանցի:

Նշենք, որ 2013-ին Թուրքիա էր այցելել 73 հազար 365 հայաստանցի, իսկ 2012-ին՝ 70 հազար 956:

Արցախ

Քալիֆորնիան ճանաչել է Լեռնային Ղարաբաղի անկախությունը



Մայիս 09, 2014

Ամերիկյան Քալիֆորնիա նահանգի պետական ժողովը (խորհրդարանը) մայիսի 8-ին բանաձեւ է ընդունել ԼՂՀ անկախությունը ճանաչելու վերաբերյալ, հաղորդում է NEWS.am-ը:

32-րդ համարի բանաձեւը ոչ միայն ճանաչում է ԼՂՀ անկախությունը, այլեւ կոչ է անում ԱՄՆ դաշնային կառավարությանը ճանաչել ԼՂՀ-ն որպես ինքնիշխան պետություն: Բանաձեւն ընդունվել է Քալիֆորնիայի օրենսդիրներին բացարձակ մեծամասնությամբ՝ 70 կողմ եւ մեկ ձեռնպահ ձայներով:

Քալիֆորնիայի խորհրդարանի անդամ, դեմոկրատ Մայք Գատտոյի խոսքով՝ Քալիֆորնիան այսուհետ ամենախիտ բնակեցված սուբյեկտն է, որը ճանաչել է Լեռնային Ղարաբաղի անկախությունը: «Ինձ համար պատիվ էր այս բանաձեւը նախապատրաստելիս աշխատել տեղի հայ համայնքի առաջնորդի հետ», - հայտարարել է նա:

«Մենք՝ քալիֆորնիացիներս, միշտ հպարտացել ենք մեր նահանգի դիրքորոշմամբ, որը հիմնված է ժողովրդավարության եւ ազգերի ինքնորոշման իրավունքի՝ սկզբունքների վրա: Այդ բանաձեւի ընդունմամբ՝ Քալիֆորնիան կանգնել է Արցախի ժողովրդի կողմը, որը հանդես է գալիս ժողովրդավարության օգտին՝ հիմնված ազատության եւ երջանկության ձգտման գաղափարների վրա», - հայտարարել է Ամերիկայի հայկական խորհրդի նախագահ Մեւակ Խաչատրյանը:

Նշենք, որ Քալիֆորնիան դարձել է ԱՄՆ 5-րդ նահանգը, որը ճանաչել է ԼՂՀ անկախությունը: Մյուս 4 նահանգներն են Ռոդ Այլենդը, Մասաչուսեթսը, Մենը եւ Լուիզիանան:

Եվրախորհրդարանի պատգամավոր.

Լեոնային Ղարաբաղի
չճանաչվածությունը աշխարհում
ժողովրդավարության
անբավարարության հետեւանք է



Մայիս 05, 2014

Երբ Լեոնային Ղարաբաղի ժողովուրդը 20 տարի առաջ որոշեց անկախություն հռչակել, եւ միջազգային հանրությունը չճանաչեց նրա անկախությունը, դա աշխարհում ժողովրդավարության անբավարարության հետեւանք էր: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտնել է Եվրախորհրդարանի պատգամավոր, Կանադացի եւ Եվրոպական ազատ դաշինքի խմբակցությունների անդամ, Բալանիայի «Արալար» կուսակցության անդամ Ինյակի Իրազաբալեյտիա Ֆերնանդեսը:

Նրա խոսքով, իրավիճակը Կատալոնիայում եւ Լեոնային Ղարաբաղում նման են ժողովրդավարության անբավարարության տեսանկյունից: «Կատալոնիայի դեպքում էր Բալանիայի կառավարությունը փորձում է արգելել հանրաքվեի անցկացումը՝ թույլ չտալով Կատալոնիայի ժողովրդին արտահայտել իր կամքն ու ցանկությունը լինելու անկախ: Այդ իրավիճակը հակադարձ համեմատական է Շոտլանդիայի վիճակին, որտեղ բրիտանական կառավարությունը մտադիր չէ խոչընդոտել շոտլանդացի ժողովրդին՝ իր ապագան ինքնուրույն որոշելու հարցում», - ասել է Ֆերնանդեսը:

Հիշեցնենք, որ բասկերով բնակեցված Կատալոնիայում հանրաքվեն նախանշված է 2014թ. նոյեմբերի 9-ին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Արեւմտյան Հայաստան

Հայրենի բնօրան վերադարձը պետք
տեղի ունենա հատուկ կարգավիճակով.
Բաֆֆի Հովհաննիսյանի հարցազրույցը
«Ալ Զազիրային»



Ապրիլ 25, 2014

Հայաստանի «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Բաֆֆի Հովհաննիսյանը արաբական «Ալ Զազիրա»-ի թուրքական ծառայության հետ հարցազրույցում հայտարարել է, թե Հայաստանը երբեք չի ընդունի Թուրքիայի նախապայմանը եւ Ղարաբաղի հարցում հետքայլ չի անի:

Թուրքիայում «Ալ Զազիրա»-ի թղթակցի հետ զրույցում Հայաստանի «Ժառանգություն» կուսակցության նախագահ Բաֆֆի Հովհաննիսյանը պատմել է, որ 1991-ին նոր պաշտոնն (Հայաստանի ԱԳ նախարար-խմբ) ստանձնելուց հետո սկսել է այն ժամանակ Թուրքիայի ԱԳ նախարար Հիքմեթ Չեթինի հետ բանակցությունները:

«Նախ, Թուրքիան հարեւան երկիր էր եւ պաշտպանական ռազմավարության իմաստով էլ Թուրքիայի հետ հարաբերությունները կարելու էին: Մյուս կողմից Արեւմտյան Հայաստանը Թուրքիայի հողերում էր, այսինքն, մեր մշակութային ժառանգությունն էլ այնտեղ էր», - նշել է Հովհաննիսյանը՝ շեշտելով, որ Թուրքիան որպես նախապայման ցանկանում էր, որ Հայաստանը ցեղասպանության հարցը օրակարգում չպահի՝ հավելելով, որ այդ նախապայմանն անընդունելի էր Հայաստանի համար:

«Լեւոն Տեր-Պետրոսյանի ժամանակ մեծ ջանքեր գործադրվեցին, ցավոք, դրանք կորած շանսեր էին: Թուրքիան միշտ նախապայմաններ է ունեցել եւ միշտ էլ ունի: Այն ժամանակ ցեղասպանության հարցն էր, հիմա Ղարաբաղը: Սակայն երկու հարցում էլ երբեք հնարավոր չէ զիջման գնալ», - ասել է «Ժառանգություն» կուսակցության առաջնորդը:

Երբ խոսքը գնում է հայ ժողովրդի իրավունքների վերականգնման եւ դեպի հայրենի բնօրան վերադարձի իրավունքի մասին, պարոն Հովհաննիսյանը շեշտել է, որ

դա պետք է տեղի ունենա հատուկ կարգավիճակով եւ ոչ երբեք քաղաքացիություն շնորհելու կամ փոխելու պայմանով:

Ինչ վերաբերվում է Էրդողանի հայտնի ուղերձին, Բաֆֆի Հովհաննիսյանն ասել է, թե կտրականապես չի ընդունում այդ հայտարարությունը, քանի որ, եթե Թուրքիան իրապես վճռական քայլ է ուզում անել, պետք է ընդունի ցեղասպանությունը:

Ղարաբաղի հարցում «Ժառանգություն» կուսակցության առաջնորդի դիրքորոշումը եւս հստակ է՝ Հայաստանը երբեք հետքայլ չի անելու: «Թուրքիան ամեն առիթի դեպքում հարաբերությունների կարգավորմանը Ղարաբաղը նախապայման է բերում: Ամենակգրից ասել ենք, որ այդ նախապայմանը երբեք չենք կարող ընդունել», - նշել է Հովհաննիսյանը:

Խոսելով արմատների մասին, Բաֆֆի Հովհաննիսյանը պատմել է, որ իր արմատները Խարբեղից են: «Իմ նախնիներին 1915-ին փրկել է մի քուրդ ընտանիք: Իմ տատի եւ պապի անունից հայերին փրկած թուրքերին եւ քղերի շնորհակալություն եմ հայտնում: Նրանք հայերին փրկելու համար իրենց կյանքն են վտանգի ենթարկել» - հավելել է Հովհաննիսյանը:

Հովհաննիսյանը շեշտել է, որ կարեւոր են ապրիլի 24-ին Ստամբուլում հասարակական նախաձեռնությունների կողմից անցկացվող հիշատակի միջոցառումները, որին մասնակցում են հիմնականում թուրքեր եւ քղեր, քանի որ հայերը վախի պատճառով դեռեւս խուսափում են մասնակցել, իսկ նրանց մասնակցությունը Թուրքիայի ժողովրդավարացման չափանիշը կլինի:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Դիարբեքիցի 84-ամյա հայը Էրդողանից ներողություն է սպասում



Ապրիլի 26, 2014

Թուրքիայում Ցեղասպանությունից փրկված եւ դեռեւս Դիարբեքիում ապրող 84-ամյա Սըթքը Էքենը նշել է, թե վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ցավակցությունը բավարար չէ:

Քրդական Firat գործակալության հետ զրույցում Դիարբեքիում ապրող հայերից Սըթքը Էքենը նշել է, թե

1915-ի ողբերգության ժամանակ իր ընտանիքին փրկել է Բիզմիլի շրջանի աղաներից մեկը: Նա պատմել է, որ ծնվել է Դիարբեքիի Սիլվանի շրջանի Բաշլեֆույուք գյուղում եւ մինչ 30 տարեկան դառնալն իրենց գյուղում միակ հայն է եղել:

Սըթքը Էքենը նշել է, որ 1984 թվականից իրենց մի փոքրիկ կացարան են հատկացրել Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցում, որտեղ մինչեւ հիմա ապրում է կնոջ հետ:

Անդրադառնալով Էրդողանի ուղերձին, 84-ամյա հայը շեշտել է, թե Էրդողանը պետք է ներողություն խնդրի հայերից: «Հայ ժողովրդի հետ տեղի ունեցածից հետո այս պետությունը ներողություն է պարտք հայերին: Ներողությունը ամոթ չէ, այն մեծություն խորհդանշող քայլ է», - ասել է Սըթքը Էքենը՝ հավելելով, որ Էրդողանի հայտարարությունը բավարար չի համարում:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրքական «Dur De» կազմակերպություն. խնդրահարույց է թուրք հասարակության նույնիսկ ամենաառաջադեմ ներկայացուցիչներին ընդունել Հայոց ցեղասպանության փաստը



Ապրիլի 26, 2014

Իհարկե, հասկանալի են թուրքական հասարակական կազմակերպությունների հանդեպ հայերի անվստահության հիմքերը, քանի որ ավելի քան 90 տարի առաջ բացարձակ լուրջություն էր տիրում քաղաքացիական հասարակության կողմից: Այդ մասին ապրիլի 26-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է թուրքական «Dur De» («Ոչ ասա ռասիզմին ու ազգայնականությանը») կազմակերպության ներկայացուցիչ Լեւանտ Շեմսեները (Թուրքիա):

Նրա խոսքով՝ այսօր իրենք խնդիր ունեն համոզել հասարակության նույնիսկ ամենաառաջադեմ ներկայացուցիչներին, որպեսզի նրանք ընդունեն Հայոց

ցեղասպանության փաստը: «Մենք շարունակում ենք մնալ թուրք հասարակության փոքրամասնությունը, որը ճանաչել է Հայոց ցեղասպանության փաստը: Մեր համագործակցությունը Հայաստանի եւ հայկական սփյուռքի կազմակերպությունների հետ սկսվել է վերջին 2-3 տարվա ընթացքում, սակայն աստիճանաբար զարգանում է», - նշել է Լեւանոս Շեմսեւերը:

Նա նաեւ ընդգծել է, որ չնայած վերջին հայտարարություններին, քուրդերը նույնպես Հայոց ցեղասպանության հարցի առթիվ հստակ դիրքորոշում չունեն:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Անկարայում կայացած համաժողովի ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել ցեղասպանության հետ կապված հայկական պահանջի 10 կետերի շուրջ



Ապրիլի 26, 2014

Երկու ամիս առաջ Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների նախաձեռնությամբ համաժողով է կազմակերպվել, որի քննարկմանն են ներկայացվել ցեղասպանության հետ կապված հայկական պահանջի 10 կետեր: Այդ մասին այսօր՝ ապրիլի 26-ին կայացած մամուլի ասուլիսին հայտարարել է թուրքական «Dür De» (Ոչ ռասիզմին եւ ազգայնականությանը) կազմակերպության ներկայացուցիչ Լեվանոս Շեմսեւերը: Նրա խոսքով, կազմակերպությունը վերջերս շփումների մեջ է մտել հայկական սփյուռքի մի քանի կազմակերպությունների հետ, որոնց մի մասը սկսել է նաեւ Թուրքիայում գործունեություն ծավալել: «Երկու ամիս առաջ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները Անկարայում համաժողով էին կազմակերպել, որին մենք եւս ներկա էինք: Քննարկման էին դրվել հայկական պահանջի 10 կետեր: Դրանց շուրջ այնպիսի համաձայնություն է ձեռք բերվել, որ արտահայտում է հայկական սփյուռքի բոլոր պահանջները: Մեր կազմակերպությունը առանց վերապահումների ընդունում է այդ բոլոր կետերը եւ

այսուհետ էլ բոլոր ուժերով աջակցություն է ցուցաբերելու նմանատիպ նախաձեռնություններին», - նշել է թուրքական կազմակերպության ներկայացուցիչը: Անդրադառնալով հիշյալ կետերի բովանդակությանը, նա նշել է, որ հստակ չի հիշում դրանք, բայց առանձնացրել է քաղաքացիության իրավունքի, ցեղասպանության գոհերի ունեցվածքի վերադարձի, ճանաչման եւ ներողություն հայցելու մասին կետերը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրքիայում կրկին քանդել են հայերի գերեզմանները եւ ոսկորները աղբի տոպրակներով հանձնել են դատախազություն



Ապրիլի 25, 2014

Թուրքիայի Բինգյոլ նահանգի Յայլադերեի շրջանում հայերի գերեզմանոցում հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերված մարդկային ոսկորները մաժունի մեծ տարաներով եւ աղբի տոպրակներով հանձնել են դատախազություն:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Բինգյոլի Յայլադերեի շրջանում մի գործառնալի համար խմելու ջրի խողովակ անցկացնելու ժամանակ փորել են նաեւ 1915-ից հետո լքված մի հայկական գերեզմանոցի տարածքը: Այդ ընթացքում շինարարները հայտնաբերել են մարդկային ոսկորներ, որոնք տեղավորել են մաժունի մեծ տարայի եւ աղբի տոպրակների մեջ եւ դատական փորձաքննության համար հանձնել են դատախազություն:

Խնդրի հետ կապված քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության Բինգյոլից ընտրված պատգամավոր Իդրիս Բալուբենը «Ակոս»-ի հետ զրույցում հայտնել է, թե անհանգստացած է հայերի գերեզմանի ավերման փաստով եւ դրա հետ կապված գրավոր հարցադրում է ներկայացնելու խորհրդարան:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրքիայում քչերը գիտեն, որ իրենց հայրենիքում ժամանակին հայեր են ապրել. թուրք լրագրող

Ապրիլի 24, 2014

Թուրքիայի վարչապետի ուղերձը կարևոր էր, բայց այն լիարժեք չէր, քանի որ նա չիտուեց Յեդասպանության մասին, միայն ասաց՝ առաջին համաշխարհային պատերազմի զոհեր: Այս մասին այսօր NEWS.am-ին ասաց Օիծեռնակաբերդի հուշահամալիրում Եդեռնի զոհերի հիշատակը հարգելու եկած թուրք պատմաբան Բյուզանդ Բիլմազը՝ անդրադառնալով Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ ապրիլի 23-ի ուղերձին:

«Մենք չենք կարող այդ երկուսը՝ հայերի հետ տեղի ունեցածն ու համաշխարհային պատերազմը հավասարեցնել, քանի որ խոսքը գնում է ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործության մասին: Թուրքիայում Յեդասպանությունն ընդունող մարդկանց թիվը տարեցտարի ավելանում է, չնայած դեռ շատ քչերն են ընդունում: Մենք բազմաթիվ կոնֆերանսներ, ցուցադրություններ ենք կազմակերպում՝ հասարակության տեղեկացվածությունը բարձրացնելու համար», - ասաց պատմաբանը՝ նշելով, որ վերջին տարիների Ստամբուլի կենտրոնական հրապարակում քաղաքացիական հասարակությունը հավաքվում է իր ցավակցությունը հայտնելու եւ կատարվածի համար ներողություն խնդրելու համար, սակայն այս տարի, նրա խոսքով, նրանց միացել են նաեւ արտասահմանից եկած որոշ կազմակերպություններ:

Թուրք պատմաբանը տեղեկացրեց, որ օրեր առաջ է եկել Հայաստան՝ Արեւմտահայոց ազգային համագումարին մասնակցելու հրավերով: Պատմաբանի հետ Հայաստան ժամանած լրագրող Ադնան Գենչը, որն այսօր նույնպես Օիծեռնակաբերդի հուշահամալիր էր այցելել, NEWS.am-ի հետ զրույցում նշեց, որ որքան էլ վարչապետն իր ուղերձում չի ասել Յեդասպանությունը բառը, նրա ուղերձը կարևոր է, քանի որ առաջին անգամ «ցավակցություն է հայտնել անցյալի վերաբերյալ»: Նա նշեց, որ Թուրքիայում շատ քիչ մարդիկ գիտեն, որ իրենց հայրենիքում ժամանակին հայեր են ապրել: «Շատ մեծ գործ է ընկնում մեզ վրա, քանի որ մենք պետք է բացատրենք 100-ամյակի խորհուրդը, պատմական իրականությունը: Ու թեև Թուրքիան շարունակում է իր հարյուրամյա ժխտողական քաղաքականությունը, որոշ կուսակցություններ, ոչ կառավարական կազմակերպություններ աշխատանքներ են կատարում՝ Յեդասպանության

վերաբերյալ հասարակության գիտակցությունը բարձրացնելու ուղղությամբ», - նշեց լրագրողը: Նա Յեդասպանությունը ճանաչելու կոչ հղեց Թուրքիային և ողջ աշխարհին՝ ասելով, որ Թուրքիան պատասխանատու է իր անցյալի համար և Յեդասպանությունը պետք է ճանաչի հանուն իր երկրի զարգացման, ժողովրդավարացման: Միևնույն ժամանակ, նա վստահաբար ասաց, որ իր կարծիքով, Թուրքիան մոտ ապագայում դժվար թե ճանաչի Յեդասպանությունը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրքիայում պետական պահպանության վերցված եկեղեցին շարունակում են ոչնչացնել



Մայիս 17, 2014

Թուրքիայի Ուրֆա նահանգի (Ուռհա, Եդեսիա) հայկական Գերմուշ (Կամուրջ) գյուղի հայկական եկեղեցին, որը 2 տարի առաջ հայտարարվել էր զբոսաշրջային կենտրոն, շարունակվում է անխնա թալանվել անհայտ անձանց կողմից:



Թուրքական Yeniurfagazetesi կայքի փոխանցմամբ՝ Գերմուշ գյուղի բնակիչներն անհանգստացած են, որ 1895 թվականին հայերի կողմից կառուցված եկեղեցին 1915-ից հետո բախտի քմահաճությամբ է մատնվել:



Թեև եկեղեցին զրոսաշրջային կենտրոն է հայտարարվել եւ 2013-ին հատուկ մաքրություն է անցել, այն շարունակում է մնալ գանձագողերի թիրախը: Տեղի բնակիչները նշել են, թե նախորդ տարի մի հրապարակում էր եղել, որ եկեղեցին օգտագործվում է որպես ախոռ, որից հետո մի պահ ուշադրություն է դարձվել եւ նորից մոռացվել եկեղեցու պահպանության մասին:

Գյուղացիները նշել են, թե իրենք կարելուք են պատմական կառույցը, փորձում պահպանել այն, սակայն իրենց արածը բավարար չէ եկեղեցու պահպանման համար:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Մուշի Սուրբ Մարինե եկեղեցին սպասում է վերանորոգմանը



Մայիսի 17, 2014

Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Մուշի հայկական Բերդի թաղում գտնվող Սուրբ Մարինե եկեղեցու վերանորոգման համար Մուշի նոր ընտրված քաղաքապետը աշխատանքներ է իրականացնում:

Ստամբուլի հայկական «Ակոս»-ի թղթակցի հետ զրույցում Մուշի քաղաքապետ Ֆեյաթ Ասիան նշել է, թե Սուրբ Մարինե եկեղեցին պահպանելու համար հատուկ աշխատանքներ են տարվում, իսկ վերականգնման համար նախագծեր են փնտրում:

Նախորդ տարի՝ 2013-ի ամռանը սկսվեց Քալե (Բերդի թաղ) թաղամասի քանդումը, որտեղ գտնվում էին հայկական տները: Մուշի նախկին քաղաքապետը հայկական պատմական տների քանդումը պայմանավորել

էր նոր բազմաբանկարան շենքերի կառուցման անհրաժեշտությամբ:

Հայկական թաղամասի գրեթե բոլոր տները քանդված են, սակայն Սուրբ Մարինե եկեղեցին կիսով չափ կանգուն է: Եկեղեցին չի քանդվել, քանի որ այն գրանցված է որպես պատմական կառույց:

Սուրբ Մարինեն հանդիսացել է Մուշի գլխավոր եւ ամենամեծ եկեղեցին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Պոլսո հայոց փոխպատրիարքը հանդիպել է Էրդողանի հետ



Մայիս 01, 2014

Պոլսո հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ. արքեպիսկոպոս Արամ Աթեշյանն այցելել է Թուրքիայի վարչապետի նստավայր եւ հանդիպում անցկացրել վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ մայիսի 1-ին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ հանդիպումից հետո Պոլսո հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ. արք. Արամ Աթեշյանը լրագրողների հետ զրույցում նշել է, թե իրենք չեն կարող չնկատել, որ առաջին անգամ թուրք վարչապետը ցավակցել է հայերին:

«Մենք չենք ուզում, որ այս խաղաղության ճյուղը չորանա: Ուզում ենք, որ այն ծաղկի եւ բերք տա: Այդ բերքի համար բոլորի աջակցության կարիքը կա: Վարչապետի ուղերձն արժանացել է հայ համայնքի մեծ մասի հավանությանը: Եկեք ձեռք-ձեռքի տանք եւ խաղաղության կամուրջի կառուցման համար դերակատարություն ստանձնենք», -ասել է արք. Աթեշյանը՝ նշելով, որ կա նեխած դիակ, որի հոտը խանգարում է երկու ժողովուրդներին:

Նշենք, որ Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ վարչապետը ապրիլի 24-ից առաջ ցավակցություն է հայտնել 1915-ի գոհվածներին, սակայն իր հայտարարության տեքստում կրկին չի հեռացել պաշտոնական ժխտողական թեզից:

Թուրքիայում հայ-թուրքական խնդիրների վերաբերյալ նոր գիրք է հրատարակվել



Մայիսի 01, 2014

Ստամբուլի քաղաքապետարանի մշակույթի բաժինը հրատարակել է հայ-թուրքական հարաբերություններին եւ խնդիրներին նվիրված գիրք:

Թուրքական Sondakika կայքի փոխանցմամբ՝ հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ նաեւ 18 հայ մասնագետների կարծիքը ներառող գրքում հեղինակ, Սաքար համալսարանի հայ-թուրքական հարաբերությունների հետազոտությունների կենտրոնի տնօրեն Հալուք Սելվին ուշադրության է հրավիրել երկկողմ հարաբերություններում առկա խնդիրներին եւ դրանց լուծման ուղղությամբ առաջարկներին:

Նշվում է, որ գրքում հայ-թուրքական հարաբերությունների ուսումնասիրությունը ներառում է 1000-ամյա անցյալից մինչ մեր օրերը, ներկայացնում թե Հայկական հարցի որ կողմում է Թուրքիան, թե ինչեր պետք է իրականացվեն երկու երկրների հարաբերությունների կարգավորման համար:

Լուրեր Հայաստանից - NEWS.am


Թուրքիայում առաջին անգամ արեւելահայերենի դասագիրք է ստեղծվել

Մայիսի 01, 2014

Թուրքիայի Էրջիյեսի համալսարանում արեւելահայերենի ուսուցման համար առաջին անգամ դասագիրք է ստեղծվել:

Թուրքական Diyarbakirsoz կայքի փոխանցմամբ՝ Թուրքիայի Էրջիյեսի համալսարանի գրականության ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության բաժնի ադրբեջանցի դասախոս Գաֆֆար Չաքմաք Մեհդիյեը կազմել է արեւելահայերենի ուսուցման համար թուրքերենով դասագիրք:

Ադրբեջանցի դասախոսը նշել է, իր կազմած դասագիրքը Թուրքիայում արեւելահայերենի առաջին դասագիրքն է:



Նա շեշտել է, թե Թուրքիայում հայերենի ուսուցումը հայ-թուրքական հարաբերությունները հասկանալու համար կարևոր է, իսկ հայ-թուրքական արխիվների բացվելուց հետո մեծ արժեք կունենա:

Բաքվի համալսարանից ժամանած Գաֆֆար Չաքմաք Մեհդիյեը նշել է, թե վերջին տարիներին Թուրքիայում մեծացել է ուսանողների հետաքրքրությունը հայոց լեզվի եւ գրականության բաժնի նկատմամբ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրք հետազոտող. Օսմանյան արխիվները փակ են կամ ոչնչացված



Մայիսի 03, 2014

Օսմանյան կայսրության եւ Թուրքական Հանրապետության դարաշրջանի փաստաթղթերը փակ են, ոչնչացված են կամ էլ չեն դասակարգվել: Այդ մասին «Bianet» կայքին տված հարցազրույցում հայտարարել է թուրք հետազոտող Մեհմեդ Փոլաթելն ի պատասխան Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի պնդմանն այն մասին, որ արխիվները բաց են Հայոց ցեղասպանության հետազոտությունների համար:

«Գլխավոր շտաբի արխիվները միայն թղթի վրա են բաց, սակայն գործնականում փակ են: Խնդիրներ են առաջանում նույնիսկ բաց արխիվներում այն

պատճառով, որ փաստաթղթերը կամ դասակարգված չեն, կամ բացակայում են»,- նշել է Բողազիչի համալսարանի ասպիրանտ Մեհմեդ Փոլաթելը: Այս պահին նա աշխատում է դոկտորական ատենախոսության վրա Աթաթուրքի սկզբունքների եւ թուրքական հեղափոխության պատմության ինստիտուտում օսմանյան դարաշրջանում հայերի բռնագրավված ունեցվածքի եւ հողային պահանջատիրության թեմայով: «Կան հեռագրերը, սակայն չկան պատասխանները: Նույնիսկ բաց արխիվներում փաստաթղթեր են պակասում»,- ասել է հետազոտողը:

Նրա խոսքով՝ այժմ հետազոտողները օսմանյան ու հանրապետական արխիվների մուտքի հնարավորություն ունեն, որոնք գտնվում են վարչապետի Պետական արխիվում: «Մենք կարող ենք տեսնել փաստաթղթերը, այդ թվում նաեւ ոչ գաղտնի, մասնավորապես Ներքին Գործերի նախարարության փաստաթղթեր, որոնք վերաբերում են ցեղասպանության դարաշրջանին: Այն, որ արխիվները բաց են, չի նշանակում, որ բոլոր փաստաթղթերն այնտեղ են: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին հանրապետական դարաշրջանում արխիվներում փաստաթղթերը կամ ոչնչացվեցին, կամ գաղտնավորվեցին: Օրինակ, թեեւ նահանգապետերին եւ նրանց տեղակալներին ուղղված հեռագրերը կան, մենք չենք կարող գտնել դրանց պատասխանները: Նման թերություններն էականորեն բարդացնում են հետազոտողների աշխատանքը: Այդ կերպ անհրաժեշտ է դառնում ցեղասպանության վերաբերյալ այլ արխիվների համեմատական ուսումնասիրությունը»,- նշել է Մեհմեդ Փոլաթելը:

Ինչ վերաբերում է ռազմական արխիվներին, հետազոտողը հայտարարել է. «Ռազմական արխիվները դե ֆակտո փակ են, բայց ես հույս ունեմ, որ վարչապետի վերջին հայտարարությունից հետո այդ արխիվները կբացվեն: Ռազմական արխիվները հետազոտողների համար բաց են միայն թղթի վրա: Օրինակ, հետազոտություն իրականացնելու համար պետք է հայտ ներկայացնել արխիվ, որի պատասխանը գալիս է գնահատումից մեկ ամիս հետո: Թեման, որի վրա աշխատում ես, կամ քո հայացքները կասկածելի են թվում, քեզ կարող են մերժել: Մերժման ժամանակ ոչ մի հիմնավորում չի ներկայացվում: Եթե քեզ թույլ են տալիս հետազոտություն իրականացնել, ապա թույլ են տալիս տեսնել միայն այն փաստաթղթերը, որոնք առնչություն ունեն քո թեմայի հետ: Դու չես կարող տեսնել փաստաթուղթը, որի համար հայտ ես ներկայացրել, եթե արխիվը վարողը համարի, որ այն կապ չունի քո թեմայի հետ»:

Երկրորդ, Փոլաթելի խոսքով՝ ռազմական արխիվները ամբողջությամբ չեն դասակարգվել եւ կատալոգների համակարգը, ներառյալ փաստաթղթերի սեղմագրերը, փակ է հասարակության համար: «Դրա համար էլ մենք այդ արխիվներում պահվող փաստաթղթերի մասին

տեղեկանում ենք նրանցից, որոնք այնտեղ հետազոտություն են իրականացնում: Իրականում դա պետք է առցանց հասանելի լիներ հասարակության համար: Բացի այդ, բոլոր փաստաթղթերը, որոնք առնչություն ունեն օսմանյան ժամանակաշրջանին, պետք է փոխանցվեն օսմանյան արխիվ: Արխիվների այդպիսի բազմազանությունը բարդացնում է հետազոտությունները»,- ամփոփել է թուրք հետազոտողը:

Հիշեցնենք, որ Հայոց ցեղասպանության 99-րդ տարելիցի նախօրեին Թուրքիայի Հանրապետության վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը «1915թ. իրադարձությունների առնչությամբ» հայտարարությամբ է հանդես եկել, որտեղ, մասնավորապես, ասվում է. «Այս օրը, որ առանձնակի նշանակություն ունի մեր երկրում եւ ամբողջ աշխարհում ապրող հայ քաղաքացիների համար, արժեքավոր հնարավորություն է ընձեռում պատմական իրադարձությունների վերաբերյալ կարծիքների ազատ փոխանակման համար: Չի կարելի հերքել, որ Օսմանյան կայսրության գոյության վերջին տարիները, նրա միլիոնավոր թուրք, քուրդ, արաբ, հայ եւ այլ ազգությունների քաղաքացիների համար՝ անկախ կրոնական եւ էթնիկ պատկանելությունից, բարդ եւ դառը իրադարձություններով լի ժամանակահատված են եղել»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Դավութօղլուն հանդիպել է արթեպիսկոպոս Արամ Աթեշյանի հետ եւ հույս հայտնել, որ իրենց պարզած ձեռքն օդում չի մնա



Մայիսի 02, 2014

Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն մայիսի 1-ին ճաշի սեղանի շուրջ հանդիպում է կազմակերպել Պոլսո հայոց պատրիարքական ընդհանուր փոխանրդ. արք. Արամ Աթեշյանի գլխավորած պատվիրակության հետ՝ հույս հայտնելով, որ վարչապետ Էրդողանի ուղերձը համապատասխան արձագանք գտնի հայկական կողմում:

Թուրքական Anadolu գործակալության փոխանցմամբ՝ Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն Պոլստ հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արք. Արամ Աթեշյանի հետ հանդիպումից հետո լրագրողների հետ զրույցում նշել է, թե հայկական պատվիրակության հետ հանդիպումն անցել է խիստ բարեկամական մթնոլորտում, որի ժամանակ հայ համայնքի ներկայացուցիչներն իրենց գոհունակություն են հայտնել Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ ապրիլի 24-ի հետ կապված ուղերձի համար:

«Վարչապետի ցավակցական ուղերձը մարդկային պարտականությունն էր, որով կրկին ցույց տվեցինք, որ աշխարհի ցանկացած կետում ապրող հայի հետ երկխոսություն ստեղծելու կամք ունենք: Նույնով ենք, որ այս հոդերում դարեր տեսած խաղաղությունը կշարունակվի եւ մեր պարզած խաղաղության ձեռքն օդում չի մնա», -ասել է Դավութօղլուն:

Նշենք, որ Դավութօղլուի հետ հանդիպումից առաջ արք. Արամ Աթեշյանը հանդիպել էր նաեւ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ:

Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ վարչապետը ապրիլի 24-ից առաջ ցավակցություն է հայտնել 1915-ի զոհվածներին, սակայն իր հայտարարության տեքստում կրկին չի հեռացել պաշտոնական ժխտողական թեզից:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

«National Post»: Հայոց ցեղասպանության Աննա Ֆրանկը



Մայիսի 02, 2014

